ՀՀ Կոտայքի Մարզ, Ջրվեժ Համայնք, Ջրվեժ գյուղ 49-րդ փողոց թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում նախատեսվող ՍՄԱՐԹ ՍԻԹԻ բնակելի թաղամասի կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «ԳԼՈԲԱԼ ՌԻԼԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ

ՄՇԱԿՈՂ՝ «ԷՅ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Երևան 2020

ՀՀ Կոտայքի Մարզ, Ջրվեժ Համայնք, Ջրվեժ գյուղ 49-րդ փողոց թիվ 36 հասցեում նախատեսվող ՍՄԱՐԹ ՍԻԹԻ բնակելի թաղամասի կառուցման
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԳԼՈԲԱԼ ՌԻԼԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ

ՀՀ Կոտայքի Մարզ, Ջրվեժ Համայնք, Ջրվեժ գյուղ 49-րդ փողոց թիվ 36 հասցեում «ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» բնակելի թաղամաս

«ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» բնակելի թաղամասի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«ԷՅ ՍԻ ԳՐՈՒՊ» _____ Ա.Այվազյան

«____» _____ 2020թ.

«ԷՅ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Նոր Նորք վ/շ. Զուղայի փ. շ.4, բն.49
Հեռ. +37496 820082
ac-group@mail.ru

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական նկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական ցանցեր

ՇՄԱԳ՝ Շրջակա Միջավայրի Ազդեցության Գնահատում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5
1.2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 6
1.3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 7
1.4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ ... 8
1.5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ և ՆՊԱՏԱԿԸ 14
1.6. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) 14
1.6.1. Ներկա վիճակի նկարագիր 14
1.6.3. Նախատեսվող գործունեության նկարագիր 16
1.6.5. Նախապատրաստական աշխատանքներ 19
1.6.6. Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 20
1.6.7. Շին. աշխատանքների իրականացման ժամանակացույց 21
1.6.8. Հողային աշխատանքեր 22
1.6.9. Կաղրային ապահովում և շինտեխնիկա. 23
1.6.10. Նյութերի և բնարեսուրսների օգտագործում 23
1.6.11. Ջրամատակարարում և ջրահեռացում 24
1.6.12. Գազամատակարարում 27
1.6.13. Էլեկտրամատակարարում 27
1.6.14. Կանաչապատման աշխատանքներ 27
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ 28
2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները 29
2.2 Շրջանի Կլիման 31
2.3 Օդային ավազան 35
2.4 Ջրային ռեսուրսներ 36
2.5 Հողերի նկարագիրը 38
2.6 Հողային ռեսուրսներ 39
2.7 Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը 40
2.8 Բուսական աշխարհ 40
2.9 Կենդանական աշխարհ 41
2.10 Պատմության, մշակութային հուշարձաններ և հատուկ պահպանության տարածքներ 42
2.11 Թափոնների կառավարում 43
2.12 Սոցիալ-տնտեսական պայմանները 43
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 44
3.1 Ռիսկերի գնահատում 44
3.2 Օդի աղտոտում 45
3.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն 46
3.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն 46
3.5 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն 47
3.5.1 Մթնոլորտային օդ 47
3.5.2 Ջրային ռեսուրսներ 47
3.5.3 Հողային ռեսուրսներ 48
3.5.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը 49
3.5.5 Աղմուկ և թրթռում 49
3.5.6 Թափոնների կառավարում 50
3.5.7 Տարածքի բարեկարգում կանաչապատում 51
4. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 52
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 53
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 57
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 58

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	«ԳԼՈԲԱԼ ՌԻԼԻ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	ք. Երևան, Կենտրոն, Թումանյան 8, 206 սենյակ
Գործունեության հասցեն՝	ՀՀ Կոտայքի Մարզ, Ջրվեժ Համայնք, Ջրվեժ գյուղ 49-րդ փողոց թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1
Նախատեսվող գործունեություն՝	«ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» բնակելի թաղամասի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
Վարչական տարածքը՝	ՀՀ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք
Էլեկտրոնային փոստը՝	globalrealestatearmenia@yahoo.com
Հեռախոսի համարը՝	+37460742222, +37493990003
Հիմնական գործունեության տեսակը՝	Բնակելի թաղամասի կառուցում
Աշխատանքային նախագիծը մշակող՝	«ԿԱՆՈՆ ԱՐԵԱ» ՍՊԸ
ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝	«ԷՅ ՍԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

1.2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

ՀՀ Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնքում «ԳԼՈԲԱԼ ՌԻԼԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ -ն նախատեսում է իրականացնել գ.Ջրվեժի 49-րդ փողոց թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում «ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» բնակելի թաղամասի կառուցման աշխատանքներ: Շինարարության 1-ին փուլի համար 24.01.2020թ.-ին տրված N02 նախագծման թույտվության համաձայն կազմվել է նախագիծ, որի համաձայն 25.03.2020թ. տրվել է N22 շինարարության թույտվություն: 2-րդ փուլի շինարարության համար 16.06.2020թ.-ին տրվել N78 նախագծման թույտվությունը:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից բնակելի թաղամաս, որտեղ առկա կլինեն առանձնատներ և մանսարդային եռահարկ շենքեր:

Բնակելի թաղամասի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ- ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

Նշված գործունեությունն ենթակա է էկոլոգիական գնահատման և փորձաքննության 2014 թ.-ի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500մ^2-ին:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի կետ 6-ի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում:

Բնակելի թաղամասի կառուցման աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.3.1. ՇՄԱԳ նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, նվազեցմանը և/կամ մեղմացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները, ինչպես նաև հաշվարկել շրջակա միջավայրին հասցված հնարավոր տնտեսական վնասի չափը:

1.3.2. ՇՄԱԳ հայտի կազմը

ՇՄԱԳ հայտ կազմը և բովանդակությունը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պայմաններին:

1.3.3. ՇՄԱԳ մեթոդաբանությունը

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ-ը իրականացվել է ազգային բնապահպանական և բնօգտագործման օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին, ինչպես նաև կիրառելի լավագույն միջազգային փորձի, բնապահպանական ուղեցույցների և ձեռնարկների դրույթներին համապատասխան:

ՇՄԱԳ հայտի մշակման ժամանակ օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

Նախատեսվող գործունեության տարածաշրջան այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը:

Տարածաշրջանի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծությունները, քարտեզները:

Նախագծի շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ բանակցությունները և քննարկումները:

1.4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության մասին» ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի: Սույն հոդվածի 8-րդ կետի համաձայն բնության հատուկ պահպանվող և անտառային տարածքներում, պատմամշակութային հուշարձանների

սահմաններում, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում իրականացվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է Գ կատեգորիայի ընթացակարգով:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը, քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լսումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշմամբ:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006 թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

«*Բուսական աշխարհի մասին*» (1999թ.) և **«*Կենդանական աշխարհի մասին*»** (2000 թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» *N 71-Ն և* ***«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»*** N 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

«*ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին*» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1999 թ, լրամշակվել է 2007 թ.) կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսություններում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտերով:

Դրանցից են՝ ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 259, «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու մասին» թիվ 192 և «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) և Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների բանած գազերում վնասակար նյութերի պարունակության սահմանային թույլատրելի նորմատիվները հաստատելու մասին» թիվ 160-Ն որոշումները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության

կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

«Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 764-Ն ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի ընդունված որոշումը կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների գնահատման և հատուցման հետ կապված հարաբերությունները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թ.-ի հոկտեմբերի 26-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» հրամանի համաձայն:

Անտառային օրենսգիրքը (2005 թ.) կարգավորում է Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները: Օրենսգիրքը սահմանում է անտառների սեփականատերերի

իրավունքներն ու պարտականությունները (Գլուխ 2), անտառների կառավարման մարմինների իրավասությունները (Գլուխ 3), անտառների դասակարգումը ըստ նպատակային նշանակության (Գլուխ 4): Օրենսգրքի Գլուխ 6-ը նկարագրում է անտառների պետական հաշվառման, անտառային պետական կադաստրի վարման և մոնիթորինգի իրականացման կարգը, Գլուխ 7-ը՝ անտառային տնտեսության վարման կարգը, Գլուխ 8-ը՝ անտառների պահպանության և պաշտպանության, Գլուխ 9-ը՝ անտառավերականգնման և անտառապատման, իսկ Գլուխ 10-ը՝ անտառօգտագործման հիմնադրույթները: Անտառօգտագործման դիմաց վճարներն ու անտառի պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման միջոցառումների ֆինանսավորման հարգը, ինչպես նաև անտառային օրենսդրության խախտումների համար պատասխանատ-վությունը սահմանված են համապատասխանաբար Օրենսգրքի Գլուխ 13-ում և Գլուխ 15-ում:

Տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների վրա ազդեցության վնասի գնահատումը իրականացվում է՝

- ՀՀ կառավարության «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 764-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 91-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» թիվ 92-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» №1110-Ն որոշմամբ:

1.5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ և ՆՊԱՏԱԿԸ

Այս նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «ԳԼՈԲԱԼ ՌԻԼԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ:

Նախատեսվող գործունեության անվանումն է գ.Ջրվեժ 49-րդ փող. թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում բնակելի թաղամասի կառուցում:

Տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «ԳԼՈԲԱԼ ՌԻԼԼ ԻՍԹԵՅԹ» ՍՊԸ-ին: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.253742հա:

Նկար 1. Բնակելի թաղամասի իրադրման սխեմա

1.6. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.6.1. Ներկա վիճակի նկարագիր

Հողատարածքը գտնվում է բնակելի տների հարևանությամբ:

Հողամասերի ընդհանուր մակերեսը կազմում է 1.253742 հա:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը հիմնականում բացակայում է:

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը հիմնականում բացակայում է: Մոտակայքում մակերևույթային ջրային

ռեսուրսներ չկան:

Հողային աշխատանքների ընթացքում այդ տարածքի բուսահողը շինարարի կողմից նախատեսվում է պահել հատուկ վայրում և պաշտպանելու համար ծածկել համապատասխան ծածկով, որպեսզի չխառնվի շինարարական աղբի հետ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո պահեստավորված բուսահողը կօգտագործվի կանաչապատման աշխատանքներում:

Ստորև ներկայացվում է տարածքի լուսանկարը:

Նկար 2. Տարածքի լուսանկարը

1.6.2. Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքը

Ներքևում տեղադրվաշ է նախատեսվող գործունեության տեղադիրքը՝ հատված գլխավոր հատակագծից:

1.6.3. Նախատեսվող գործունեության նկարագիր

Ներկայացված նախագիծը կատարված է համաձայն 24.01.2020թ. Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի կողմից հաստատված N2 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների:

Նախատեսվող գործունեության հողատարածքը գտնվում է Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնքի, Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում: Հողատարածքը գտնվում է բնակելի տների հարևանությամբ:

Սեփականության վկայականները ներկայացված են հավելվածներում:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.253742հա: Նախատեսվում է կառուցել բնակելի թաղամաս:

2020թ. մայիս ամսին ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36, 38-րդ փողոց թիվ 1 և հողամասի տարածքներում ինժեներա–երկրաբանական հետազննման նպատակով (կից ներկայացված է հավելվածներում):

ՍՄԱՐԹ ՍԻԹԻ թաղամասն առանձնացված պարսպապատ փակ թաղամաս է, որը կառուցվում է Գլոբալ Ռիլլ Իսթեյթ ընկերության (կապալառու-կառուցապատող) կողմից՝ շինարարական թիվ 16594 լիցենզիայի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից թաղամասի կառուցման հավանության և համայնքապետարանի համապատասխան շինարարական թույլտվությունների հիման վրա: Թաղամասը կառուցվում է 12,537 մ^2 հողատարածքի վրա: Հեռավորությունը Հանրապետության հրապարակից ընդամենը 9.1կմ է, Ինժեներական քաղաքից՝ 620մ: Երեք կողմերով անցնում են համայնքային նշանակության ճանապարհներ, որոնց միանում են թաղամասի չորս հիմնական մուտքեր-ելքերը:

Նախատեսվում է կառուցել 24 առանձնատներ և 4 եռահարկ բազմաբնակարան շենքերը (մանսարդային և նկուղային հարկերով): Շինությունները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 3,606 մ^2 մակերեսը կամ ընդամենը 29%-ը: Թաղամասն ունի 6,879 մ^2 ընդհանուր օգտագործման ճանապարհներ-մայթեր, կանաչապատ գոտի-խաղահրապարակներ:

Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է մոնոլիտ երկաթբետոնե կոնստրուկցիաներով:

Առանձնատների և եռահարկ մանսարդային հարկով շենքերի որմնախարիսխը բազալտից է, արտաքին ճակատները նախատեսվում է երեսապատել տուֆե և տրավերտինե սալերով, երեսապատել կամ սվաղել ցեմենտ-ավազե շաղախով և ապա ներկել:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող բնակելի թաղամաս: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- Հողամասի ընդհանուր մակերես՝ 1.253742հա,
- Մենատների/ առանձնատների կառուցապատման մակերեսը՝ 2364 մ^2
- Մանսարդային եռահարկ շենքերի կառուցապատման ընդհանուր մակերեսը՝3294 մ^2
- ընդհանուր օգտագործման ճանապարհներ-մայթեր՝ 2,000 մ^2
- Կանաչապատ գոտի-խաղահրապարակներ՝ 4,879 մ^2

Շինաշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ

տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

1.6.4. Շինարարական աշխատանքներ

Բնակելի թաղամասի կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատաներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ
- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածք և ասֆալտապատման հարթակներ:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

1.6.5. Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

1. Մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանքի կատարելը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված ստանալ թույլտվություններ:
2. Իրականացնել հողային աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև քանդման աշխատանքներ համաձայն համայնքապետարանի կողմից տրված թույլտվության:
3. Կազմակերպել շինհրապարակը՝ անհրաժեշտ ենթակառույցներով:
4. Տարածքը մաքրել շինարարական աղբից և ապամոնտաժված տարրերից, որոնք բարձվում են ինքնաթափեր և տեղափոխվում համապատասխան աղբավայր:

Հաշվի առվելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով

ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

1.6.6. Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականցումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլետկավորվում է հակահրդեհային ինվերտարով:

<u>Աշխատանքի կազմակերպում</u>

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական – որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

<u>Աշխատանքի պաշտպանություն</u>

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ /հատուկ կոշիկներ, արտահագուստ/ համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով /լուսավորում, օդափոխություն,

պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն/, սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվում հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթաքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգավորման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վւճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված միջոցառումների կատարման հսկողության վերապահվում է աշխատանքներն իրականցնող կազմակերպությանը:

<u>Շինտեխնիկայի տեղաշարժ</u>

- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում
- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ
- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում:

1.6.7. Շին. աշխատանքների իրականացման ժամանակացույց



1.6.8. Հողային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության հողատարածքը գտնվում է Կոտայքի մարզի գ.Ջրվեժ 49-րդ փողոցի թիվ 36 և 38-րդ փողոցի թիվ 1 հասցեներում: Ընդհանուր հողատարածքի մակերեսը կազմում է 12,537մ^2:

Շինարարության ընթաքում մշակման ենթակա գրունտը պատկանում են II կարգի (ըստ սեյսմիկ հատկանիշների ՀՀ ՇՆ II-69.02-06): Գրունտի մշակումը փոսորակում և խրամուղիներում իրականացվում է “հետ-բահ” էքսկավատորով: Մաքրամշակումը իրականցվում է ձեռքով բանվորական ուժի օգնությամբ: բնահողի տեղափոխումը իրականցվում է ավտոինքնաթափ: Հետլիցքի համար օգտագործվում են գրունտի փափուկ բնահողերը: Հիմքերի, հարթակների և հատակների հետլիցքը իրականացվում է բանվորական ուժի օգնությամբ՝ տեղափոխոլով գրունտը սայլակներով: Հետլիցքը նախատեսվում է խտացնել ձեռքի պնեվմատոփիչներով:

Շինարարական աշխատանքերի ժամանակ կառուցապտվող տարածքի համար հողային աշխատանքներից առաջացող հանույթի, մշակվող գրունտի ծավալը ընդհանուր կկազմի 1850մ^3: Հատկացվող հողամասում նշված գրունտից բուսահողի ծավալը գնահատվել է 100մ^3, որը տրամադրվում է համայնքի կողմից: Այս և հետագայում բերվող ցուցանիշները նախնական են և վերջնական նախագծում կարող են փոփոխվել, բայց՝ ոչ էական:

Ազդեցության ենթակա բուսահողը կհեռացվի և կպահվի տարածքում: Հետագայում

բուսահողի նշված զանգվածը կօգտագործվի բնակելի թաղամասի կանաչապատման աշխատանքներում:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր շինարարական թափոնները նախատեսվում է առաջացնել, դրանք օգտագործել տարբեր նպատակներով շինարարական աշխատանքների, լիցքերի ժամանակ, իսկ առաջանալու դեպքում և տեղափոխվելու են նախապես համաձայնեցված թափոնների աղբավայր:

1.6.9. Կադրային ապահովում և շինտեխնիկա.

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 28 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ – 2 մարդ
- Բանվորներ, սպասարկող աշխատողներ - 26 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- ԱվտոԿռունկ MAZ - 1,
- JCB տրակտոր - 1,
- Բեռնատար - 1
- Էլ. Եռակցման սարք - 4
- Ձեռքի մեխանիկական գործիքներ,
- Ատաղձագործական գործիքներ,
- Ներկարարական գործիքներ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝1850մ³

Հետլիցք՝1300մ³

Ավելացած հողային զանգվածը, որը կազմում է 550մ³ կօգտագործվի տարածքի բարեկարգման և հարթեցման համար:

1.6.10. Նյութերի և բնարեսուրսների օգտագործում

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութ, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար և շինանձնակազմի խմելու, կենցաղային նպատակների համար:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

b) **W**խ.տ. **= (n x N + n1 x N1) x T,** որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝2 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ^{3}օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 26 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ^{3}օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 720 օր

Wխ.տ.= (2 x 0.016 + 26 x 0.025) x 720 = 491.04 մ^3/շին. ժամ. կամ 0.682 մ^3/օր:

c) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ Մ1 = S1 x K1 x T, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը, 2000 մ^2,

K1 – 1 մ^2 օրական ջրցանի նորմը, 0.0015 մ^3,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 300

Մ1 = 2000 x 0.0015 x 300 = 900 մ^3/շին. ժամ. կամ 0.95 մ^3/օր

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 906.98 մ^3/շին. ժամ:

Ջրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող ջրատարից, որը կմիացվի համայնքային ջրամատակարարման ցանցին: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

1.6.11. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Բնակելի թաղամասի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):

Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ համայնքային անցնող ջրագծից: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Ներքին տաք և սառը ջրամատակարարում, ջեռուցում

Ներքին ջրամատակարարման ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե խողովակներով:

Ջրամատակարարման և ջրահեռացման սխեմա





Տաք ջրամատակարարումը և ջեռուցումը նախատեսված է կենտրոնացված: Այդ նպատակով տեղադրվելու է ջեռուցման կենտրոնացված ինվերտորային կաթսայատուն՝ սմարթ համակարգով:

Տաք ջրամատակարարման և ջեռուցման սխեման



1.6.12. Գազամատակարարում

Նախատեսվող բնակելի թաղամասի գազամատակարարումը կիրականացվի համաձայն Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի (կցված հավելվածների բաժնում):



1.6.13. Էլեկտրամատակարարում

Էլեկտրամատակարարումը իրականցվելու է Ջրվեժ համայնքի կայանից:
Հաշվի առնելով, որ խելացի քաղաք տեխնոլոգիաները, վերականգնվող էներգիան այսօրվա համաշխարհային մարտահրավերներից են՝ «ԳԼՈԲԱԼ ՌԻԼ ԻՍԹԵՅԹ» ընկերությունը նպատակ ունի կիրառել խելացի և նորարական տեխնոլոգիաներ «ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» թաղամասի կառուցման գործում: Այդ նպատակով, արևային էներգիան կօգտագործվի ֆոտովոլտային սարքավորումների միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության և բնակելի թաղամասի կարիքների օգտագործման համար:

Նախատեսվում է առանձնատների տանիքներին տեղադրել արևային պանելներ էլեկտրաէներգիայի արտադրության համար ըստ բնակչի հայեցողության:

Այն վերականգնվող էներգիայի կարևոր աղբյուր է և այդ տեխնոլոգիաների կիրառությունը քայլ առաջ է արդի համաշխարհային զարգացման գործընթացներին:

1.6.14. Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Համաձայն նախագծային տվյալների կանաչապատման մակերեսը կազմում է 4879մ^2: Կանաչապատման ծրագիրը իրականացնելու համար

ստեղծվելու է որոշ հատվածներում մինչև 30 սմ հաստությամբ արհեստական մակերեսային հողային շերտ՝ սիզամարգերի և ծաղկային օջախների համար: Թփերն և ծառատեսակներն տնկելու և նրանց կպչողականությունն ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 100մ^3 սնառող, համապատասխան քանակությամբ տորֆ և կարմիր ավազ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, մասնառորապես կանաչապատման համար կօգտագործվի՝

- Դեկորատիվ ակացիա – 40 հատ
- Կանադական բարդի – 160 հատ
- Կանադական կարմիր տեսակի բարդի – 20 հատ
- Եղևնի – 20 հատ
- Դեկորատիվ տուա – 25 հատ
- Կլյոն – 7 հատ
- Մրգատու ծառեր (կեռասենի, սալոր, դեղձ, ծիրանենի, խնձորենի) - 240 հատ
- Վարդ – 100 հատ
- Մարժևնիք – 10 հատ
- Սամշիթ – 30 հատ
- Մարգախոտ

Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Հողային աշխատանքների ընթացքում կառաջանա 200մ^3 հողաբուսաշերտ: Հողի բերի շերտը օգտահանումը և պահպանումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներով. հողի ծածկում հատուկ վայրում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորդյուրներ): Աշխատանքների ավարտից հետո հողաբուսաշերտը կօգտագործվի տարածքի կանաչապատման նպատակով:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2020թ. մայիս ամսին ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36, 38-րդ փողոց թիվ 1 և հողամասի տարածքներում ինժեներա–երկրաբանական հետազննման նպատակով:

Կատարված դաշտային և կամերալ աշխատանքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները՝

1. Տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների համար:
2. Նախագծվող կառույցների համար կարող է հուսալի հիմք ծառայել № 2 և 3 շերտերը, ապահովելով գրունտերի միասեռությունը, որն էլ անհրաժեշտ է տվյալ տեղանքի համար:
3. Գրունտային ջրերը ընկած են 30մ ավել խորության վրա :
4. Համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզի ուսումասիրվող շրջանը պատկանում է 3-րդ գոտուն:
5. Ըստ սեյսմիկ հատկությունների, համաձայն ՀՀՇՆ II-6.02.2006թ. գրունտները, որոնք ընկած են այդ տարածքում պատկանում են II կարգին:

2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Բնակելի թաղամասի նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնքի 49-րդ փողոց թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում : Հեռավորությունը Երևան քաղաքի Հանրապետության հրապարակից ընդամենը 9.1կմ է:

«ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» թաղամասը գտնվում է Ջրվեժ գյուղում և բարենպաստ ճանապարհատրանսպորտային պայմաններում: Այն սահմանակից է մայրաքաղաքի Նոր Նորք վարչական տարածքի հետ և կապված է մայրաքաղաքի հետ ասֆալտապատ ճանապարհներով: Մոտակա բնակավայրերն են նաև Ողջաբերդ և Զորաղբյուր գյուղերը:

Գյուղը չունի հարթ մակերես: Հյուսիսային մասում այն կտրտված է ձորակներով, արևելյան մասից սկիզբ են առնում Զորաղբյուրի և Ողջաբերդի լեռնաբազուկները, հարավային մասում խոր ձորակներ են, որոնք շարունակվում են մինչև Արին-Բերդ, արևմտյան կողմով՝ ձորերով և կիրճերով միանում է Երևանին:

Մորֆոլոգիական առումով աշխատանքների շրջանը գտնվում է Նոր Նորքի հարթակի վրա:

Տեղամասում տարածված են հրաբխային ապարներ, ծածկված պրոլյուվիալ, էլյուվիալ, դելյուվիալ նստվածքներով:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Ջննվող տարածքում ընկած գրունտերի որոշման համար օգտագործվել են արհեստական և բնական մերկացումների ուսումնասիրությունը, ինչպես նաև ֆոնդային տվյալները:





2.2 Շրջանի Կլիման

Ինչպես արդեն նշվեց 2020թ. մայիս ամսին ինժեներա–երկրաբանական հետազննման նպատակով ուսումնասիրություններ են կատարվել տարածքում :

Ըստ այդ ուսումնասիրության տարածքի կլիման մայրցամաքային է բարձր տատանման ամպլիտուդով, չոր ձմեռ և տաք ամառ:

- Օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է +41^{0}C, իսկ բացարձակ նվազագույնը՝ -30^{0}C:
- Տեղումների տարվա միջին քանակը հավասար է 210 մմ:
- Ձյան ծածկի քաշը՝ 70կգ/մ^2:
- Բնահողի առավելագույն սառեցման խորությունը 0,8 մ:
- Քամու գերակայող ուղղությունը ձմռանը հարավ–արևմտյան, ամռանը՝ հյուսիս–արևելյան:
- Քամու արագությունը քսան տարվա մեջ հնարավոր է 24մ/վրկ:
- Քամու արագության ուժը՝ 45կգ/մ^2:

Ընդհանուր առմամբ տարածքին բնորոշ է ցամաքային կլիմա: Կլիմայական տիպերի տարածման քարտեզը ներկայացված է նկար 5-ում:

Նկար 5. Տարածքի Կլիմայական տիպերը



Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1360 մետր, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ: Տարվա եղանակներից համեմատաբար լավ է գարունը, ամառը տևական է՝ 4,5-5 ամիս: Տարեկան տեղումների քանակը կազմում է 250-ից 350 մմ, վերջին տարիներին նկատվում է տևական ձնածածկույթի սակավություն և կարկտահարություն:

Կլիմայական բնութագիրը ներկայայացվում է ըստ մոտակա Երևան օդերևութաբանական կայանի տվյալների:

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները, °C

Աղյուսակ 1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-4.0	-1.3	5.4	11.8	17.0	21.1	25.1	24.9	20.1	13.6	6.2	-0.9	**11.6**

Օդի միջին նվազագույն ամսական և տարեկան ջերմաստիճանները, °C

Աղյուսակ 2.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-7.9	-5.7	-0.3	5.6	10.1	13.5	17.3	16.9	12.2	7.0	1.4	-4.4	**5.5**

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 3.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	**60**

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է մինչև 400մմ, միջինը՝ 320մմ: Տեղումների տարեկան գումարի 35-45% լինում է ապրիլ-մայիս ամիսներին:

Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Ձյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը –70 կգ/մ2: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Ձյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյանում է ոչ ամեն տարի:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 4.

Տեղումների քանակը միջին, մմ մաքսիմալ օրական												տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
24 21	26 23	32 34	43 29	52 42	27 31	13 29	10 26	13 51	26 35	28 36	22 28	**316** **51**

Բնորոշ են լեռնահովտային քամիները, որոնք հատկապես արտահայտված են ամռանը: Քամիների գերակշռող ուղղություններն են հյուսիս-արևելք և արևելք: Հաճախ լինում է անդորր (58%):

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ2:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևանի մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 5.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱր Լ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	3 2.0	10 2.1	13 2.2	16 2.8	20 2.6	26 2.3	9 2.7	3 3.4	78
IV	7 3.1	14 2.9	8 2.4	18 3.5	18 3.0	16 3.0	13 4.1	6 3.4	50
VII	17 5.5	31 5.9	3 2.2	9 2.4	16 2.1	13 2.5	7 2.7	4 4.6	40
X	5 2.7	18 2.3	10 1.8	11 2.5	19 2.2	22 2.2	10 2.8	5 3.7	70

Արեգակնային փայլի տևողության, ճառագայթման ուժգնության բնութագիրը նամս

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Աղյուսակ 6.

Գումարային ճառագայթում (ուղիղ + ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկինքի դեպքում, ՄՋ/մ²												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	**700**

Արեգակնային փայլի տևողությունը (Երևան Ազրո”)

Աղյուսակ 7.

Տևողությունը ըստ ամիսների, ժամ												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	118	169	212	283	334	359	352	300	246	144	90	**2696**

Ամպամած օրերի քանակը (Երևան “Ազրո”)

Աղյուսակ 8.

Ըստ ամիսների, օր												տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	**39**

2.3 Օդային ավազան

Մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնի տվյալներին (http://armmonitoring.am/), Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 46 շարժական դիտակետ և 7 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1, №18, №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 5 դիտակայանում (№1, №7, №8, №16-1, №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Երևանը երեք կողմից շրջապատված է սարերով, ինչը խոչընդոտում է աղտոտիչների բնական ձևով ցրվելը մթնոլորտում և, հետևաբար, հանգեցնում է օդում բարձր խտացումների: Օդի աղտոտիչների գոյացման հիմնական աղբյուրն ավտոմեքենաների արտանետումներն են, որոնք կուտակվում են ճանապարհացանցի ինտենսիվ շահագործման հետևանքով: Երևան քաղաքի գլխավոր հատակագծում գնահատված է, որ օդի աղտոտիչների շուրջ 95%-ն առաջանում է հասարակական տրանսպորտի գործառնությունից:



2017-2018թթ.-ի չափումների տվյալներով, որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.4 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում

է էկոմոնիտորինգի կողմից:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, և Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին:

<u>Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք</u>

ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնն (http://armmonitoring.am/) իրականացնում է Հրազդան և Գետառ գետերի (գետաբերան, դիտակետ 59) աղտոտվածության ուսումնասիրություն (նկար 7):



Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ5-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով,

ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

2020թ. մայիս ամսին տարածքի ինժեներա–երկրաբանական ուսումնասիրություններ համաձայն ուսումնասիրվող տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերևից–ներքև:

№ 1 շերտ	Բուսահողի շերտ, որը կազմում է ընդհանուր տարածքի մոտ 30%: Ունի մասնակի տարածվածություն: Հզորությունը՝ 5-10սմ է:
№ 2 շերտ	Կարբոնատային կեղև: Հզորությունը՝ 0,5-2,5մ է: Շերտը տարածված է ամենուր: Այս գրունտները ունեն հետևյալ ֆիզիկա–-մեխանիկական և դեֆորմատիվ ամրության բնութագրիչները՝ Բնական գրունտի խտությունը՝ 1,90տ/ մ^3 Դեֆորմացիայի մոդուլը՝ 250կգու/սմ^2 Պայմանական հաշվարկային դիմադրությունը՝ R_0=2.5կգու/սմ^2: Պաստելի գործակիցը՝ 4 կգ/սմ^3
№ 3 շերտ	Բեկորային բազալտներ տեղ-տեղ խարամապարկերով, որոնք չեն ենթարկված ոչ ուղղահայաց և ոչ էլ հորիզոնական տարածման: Այս գրունտերը ընկած են № 2 շերտի տակ: Տարածված են ամենուր, հզորությունը՝ 20մ ավելին է: Այս գրունտները ունեն հետևյալ ֆիզիկա–-մեխանիկական և դեֆորմատիվ ամրության բնութագրիչները՝ Խտությունը – δ=2,41 տ/մ^3 Տեսակարար կշիռը – γ=2,75տ/մ^3 Ծակոտկայնությունը՝ I=12% Պայմանական հաշվարկային դիմադրությունը՝ R_n=5կգու/սմ^2: Պաստելի գործակիցը՝ 20 կգ/սմ^3

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Շագանակագույն հողերի հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ

մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ3-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ3-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրտեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ:

Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%:

Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO4, MgSO4 և այլ աղեր:

2.6 Հողային ռեսուրսներ

Բնակելի թաղամասի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 1850 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 1300 մ³ հետլիցք: Ավելցուկային 550մ³ ծավալով հողային զանգվածը կօգտագործվի տարածքի բարեկարգման և հարթեցման համար:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի

շերտի օգտագործման կարգով, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.

- Հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

2.7 Հողերի նպատակային և գործառնական նշանակությունը

Բնակելի թաղամասի նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոտայքի մարզի գ. Ջրվեժ 49-րդ փողոց թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում:

Հողատարածքի մակերեսը կազմում է 1.253742հա: Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի/ տների հարևանությամբ, բնակելի կառուցապատված գոտում:

Հողամասերի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը և գործառնական նշանակությունը կամ հողատեքը ներկայացված են սեփականանության վկայականներում, որոնք տեղադրված են հավելված բաժնում:

2.8 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր՝ տափաստանային կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ Երևանյան լանդշաֆտի

ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները օշինդրա էֆեմերային և հալոֆիլ պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ տեղ-տեղ հանդիպում են Սեզ սողացող (E. repens), Սեզ սանրանմանը (E. cristatum), Սեզ մազակիրը (E. trichophora), Սեզ միջինը (E. intermedia), Սեզ երկարավունը (E. elongatum):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:



2.9 Կենդանական աշխարհ

Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ

մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը:

Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը կանաչ դոդոշը մողեսներից՝ կլորագլխիկը օձագլխիկը և երկարատ սցինկը օձերից՝ կույր օձուկը ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր սարդեր փափկամարմիններ մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրազդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում տրանսպորտային երթևեկություն մեքենաների շարժ և աղմուկ ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է կամ բացառվում է:

Տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանական տեսակներ չեն արձանագրվել:

2.10 Պատմության, մշակութային հուշարձաններ և հատուկ պահպանության տարածքներ

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Ջրվեժ համայնքի շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

Տարածքին մոտ են Ջրվեժի անտառ-պուրակը (դեպի արևելք):

Բնակելի թաղամասից բավականաչափ հեռավորության վրա են անցնում է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի մաս կազմող Ջրվեժի անտառապարկի սահմանը, որը հիմնադրվել է 1977թ.-ին: Ներկայումս պարկը զբաղեցնում է 423.8 հա տարածք, որից անտառապատ է 260 հա: Արհեստական տնկարկները զուգորդվում են բնական կիսաանապատային և լեռնատափաստանային լանդշաֆտներով: Ներմուծված ծառաթփատեսակները եւ պարտեզային ձևերն անցնում են 100-ից (եղևնի կովկասյան, սոճի ղրիմյան, խեժափիճի սիբիրական, թույա արևմտյան և այլն): Բնական ֆլորան ներկայացված է անոթավոր բույսերի ավելի քան 300 տեսակներով:

Տարածքը հանդիսանում է տնտեսապես յուրացված շրջան, խիտ բնակեցված է, առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները (ճանապարհներ, էլեկտրահաղորդման գծեր և այլն): Նոր

էական ճնշումներ տարածքի էկոհամակարգի վրա չեն դրսևորվելու, այդ իսկ պատճառով ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների վրա որևիցե բացասական ազդեցություն չի լինելու: Դրան նպաստելու է նաև հեռավորությունը «Էրեբունի» պետական արգելոցի և Ջրվեժի անտառապարկից մինչև բնակելի թաղամաս:

2.11 Թափոնների կառավարում

Համայնքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Սակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է 13-15մ^3 և շինարարական աղբը, որը առավելագույն արվելու է առաջանալու համար: Առաջացած շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր:

2.12 Սոցիալ-տնտեսական պայմանները

Ջրվեժ համայնքը բազմաբնակավայր համայնք է:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Ջրվեժ, Զովք, Զորաղբյուր համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Ջրվեժ համայնքը:

Ջրվեժ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են Ջրվեժ, Զովք, Զորաղբյուր գյուղերը: Համայնքի կենտրոնն է հանդիսանում Ջրվեժ գյուղը: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Առինջ, Մայակովսկի, Արամուս, Կամարիս, Գեղադիր, Ողջաբերդ համայնքներին և Երևան քաղաքին:

գ.Ջրվեժ

Մակերես՝ 16.46կմ2

Բնակչություն՝ 6,950

Ջրվեժ գյուղական համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում, սահմանակից է Երևան քաղաքի երեք թաղային Նոր-Նորք, Ավան-Առինջ, Էրեբունի

համայնքներին և մարզի երեք գյուղական Առինջ, Զորաղբյուր, Ողջաբերդ համայնքների վարչական տարածքներին: Մարզկենտրոնից գտնվում է 45 կմ հեռավորության վրա, Աբովյան քաղաքից 9 կմ: Այստեղով են անցնում Երևան-Գառնի մայրուղին և Աբովյան-Մասիս ավտոճանապարհը:

Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1360 մետր, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները՝ բարենպաստ:

Համայնքում գործում է հանրակրթական դպրոցը, Ջրվեժի նորաստեղծ մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը, «Ջրվեժ բժշկական ամբուլատորիա» ՊՓԲԸ, «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը և «Ջրվեժի բարեկարգում» ՓԲԸ-ն, ինչպես նաև 28 պարենային և ոչ պարենային խանութներ, հանրային սննդի թվով 23 կազմակերպություններ, գրանցված են արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ, անհատ ձեռներեցներ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարական փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Նոր կառուցվող շենքերի շինարարության ընթացքում,
- Հիմքերի փորման և բեռնման աշխատանքների ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շին. տեխնիկայի շահագործման ժամանակ,
- Հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիակայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչության պատճառվող անհանգստությամբ,
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Օդի աղտոտում

Բնակելի շենքերով թաղամասի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները բնազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող

մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շինհրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի տների բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

3.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակի անձնաց համապատասխան բողոքի դեպքում: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների հեռավորությունները շինտարածքից: Հարակից տների բնակչության հնարավոր բողոքի դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն և ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները և այլ հասարակական շենքերը,
- Աղմկահարույց աշխատանքները հնարավորնիս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը:

3.4 Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառու աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

<u>Ջրահեռացում</u>

Ջրցանը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին և արտահոսք չի առաջացնում:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից, որոնք կտեղադրվեն մինչև շինարարական աշխատանքների սկիզբը և կմիացվեն տարածքում առկա ջրագծին և կոյուղուն:

3.5 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Շրջակա տարածքների և գործունեության զդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմանականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականցմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարար, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդցությունները կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներիկայացվում են ստորև:

3.5.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելու համար է փոշու տարածումը,
- Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

3.5.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

3.5.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը և քսայուղերի ժամանակավոր պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:
- Հողամասում ազդեցության ենթակա բուսահողը պահեստավորել շինարարական հրապարակի տարածքում՝ 2մ-ը չգերազանցող կույտերի ձևով և ծածկել պաշտպանիչ պաստառներով՝ հետագայում բուսահողի նշված զանգվածը բնակլեի թաղամասի կանաչապատման աշխատանքներում օգտագործելու համար:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թառները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր,
- Եթե առաջանան վտանգավոր թափոններ, դրանց հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր թափոնների վնասազերծման, կամ տեղակայման լիցենզիա,

- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատարարներից:

3.5.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.5.5 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները և այլ հասարակական շենքերը;
- աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին;
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին;
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում;
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին;
- բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով;
- հնարավորության դեպքում սահամափակկել միաժամանակ աշխատող ծանր տեխնիկայի /բուլդոզեր, էքսկավատոր/ շահագործումից:

3.5.6 Թափոնների կառավարում

Բնակելի թաղամասի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական աղբ և թափոններ:

<u>Շինարարական աղբ</u>՝

- Քանդման աշխատանքների արդյունքում առաջացած թափոններ,
- Խառը շինարարական աղբ և թափոններ,
- Մնացորդային գրունտ,
- Կենցաղային թափոններ:

Բնակելի թաղամասի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր

ունեցող աղբահավաքների կողմից:

- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել:
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը:

3.5.7 Տարածքի բարեկարգում կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը պետք է բարեկարգվի և կանաչապատվի: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել նաև նաև հողային աշխատանքների ժամանակ պահեստավորված բուսահողը /200մ^{3}ծավալով/: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը համաձայնեցվել է Ջրվեժի համայնքապետարանի հետ: Ըստ կանաչապատման նախագծի տարածքում տնկվելու են հետևյալ ծառատեսակները/ ծառաթփային՝

- Դեկորատիվ ակացիա – 40 հատ
- Կանադական բարդի – 160 հատ
- Կանադական կարմիր տեսակի բարդի – 20 հատ
- Եղևնի – 20 հատ
- Դեկորատիվ տուա – 25 հատ
- Կլյոն – 7 հատ
- Մրգատու ծառեր (կեռասենի, սալոր, դեղձ, ծիրանենի, խնձորենի) - 240 հատ
- Վարդ – 100 հատ
- Մարժևնիք – 10 հատ
- Սամշիթ – 30 հատ
- Մարգախոտ

Կանաչապատ տարածքների, ներառյալ ավտոկայանատեղերի տանիքի մասամբ

խոտածածկ տարածքի /1370մ^2/, ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով, որին միացումը կիրականացվի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից՝ կնքվելիք պայմանագրի համաձայն: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Աշխատանքների ավարտից հետո հողաբուսաշերտը կօգտագործվի տարածքի կանաչապատման նպատակով:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառաթփուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

4. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մշտադիտարկում:

Բնապահպանական կառավարման պլանը (ԲԿՊ) իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ-ը պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականցվեն կանոնավոր միշտադիտարկումներ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մշտադիտարկամ ստուգայցեր՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Արդյունքները գրանցվելու են մշտադիտարման ստուգաթերթիկում:

Բնակելի թաղամասի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
5. Կանաչապատման մոնիթորինգ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1մլն դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 1.5-2մլն դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ

Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(I) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (II) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (III) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (IV) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (V) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(I) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (II) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (III) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(I) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (II) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (III) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (IV) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (V) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվագ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(I) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, (II) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:

Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում
Տարածքի բարեկարգում/ կանաչապատում	Շրջակա տարածքների աղտոտում	(I) կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների; (II) ձեռնարկել տնկված թփերի և խոտածածկի պահպանումը և մոնիթորինգը՝ բուսականության բարձր աճն ապահովելու համար
Աղմուկի և թրթռումների կառավարում		(I) Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր (II) Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, (III) Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, (IV) Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: (V) Անհարաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
Թափոնների կառավարում	Շինաղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ	(I) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (II) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (III) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (IV) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել (V) Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգկերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը (VI) Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; (VII) Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարմա ն պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարմա ն ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - Համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, համայնքապետարան
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության - նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի կանաչապատում, բարեկարգում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում	Շինարարության Ավարտին և շահագործման ընթացքում	Կապալառու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու
Բարեկարգված /2000.0մ2/ և խոտածածկ /4879.0մ2/ տարածքի պահպանում	Կաթիլային ոռոգում, բարեկարգված տարածքի ջրցանում, աղբահանություն, կպչողականության ապահովում	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը	Շահագործման ընթացքում	Պատվիրատու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշմամբ հաստատված "Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը":
2. ՀՀ Կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92-Ն որոշմամբ հաստատված "Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը":
3. ՀՀ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1746-Ն որոշմամբ հաստատված "Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցները և սահմանները":
4. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, EMEP/EEA, 2009:
5. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմերի 20-ին:
6. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
7. ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի "Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին" թիվ 764-Ն որոշում:
8. Հայաստանի Ազգային Ատլաս, Երևան, 2007:
9. Հայաստանի բնաշխարհ, 2006:
10. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
11. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
12. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
13. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
14. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
15. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
16. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
17. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
18. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 02 «24» հունվարի 2020թ.
(ՓՈՓՈԽՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020Թ. ԱՊՐԻԼԻ 23-Ի N 191-Ա ՈՐՈՇՄԱՄԲ)

Օբյեկտ **մենատների և մանսարդային հարկով եռահարկ շենքերի կառուցման**
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

8 հատ մենատուն, 2 հատ եռահարկ շենքեր
հակիրճ բնորոշումը, հզորությունը,

IV կատեգորիա նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36 հասցեի հողամաս, կադ. ծածկ. 07-057-0315-0072**
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **«Գլոբալ Ռիլլ Իսթեյթ» ՍՊԸ, տնօրեն Արա Խաչատուրի Մարկոսյանին, բն. բ. Երևան Թումանյան փ., 8 շենք, 206 գրաս. հեռ. 093 99-00-03**
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը **կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման**
(կառուցապատման նպատակով << օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման,

N 17012020-07-0185 վկայականը , տրված «17» հունվարի 2020 թվականին, նախագծի էքսիզային տարբերակը
անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը **երկու տարի**
(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

1. Հողամասը գտնվում է **բնակավայրի բնակելի կառուցապատման գոտում**
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում. դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (*) Հողամասի չափերը **0.391717 հա**
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ. մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը **առկա է պարիսպ 18.56 քառ.մետր և 1.22 քառ.մետր մակերեսներով**
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը,
(օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն),
կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*)Տրանսպորտային պայմանները
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*)Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) **չկա**
(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները. այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*)Կից հողամասեր **տնամերձ հողամասեր, համայնքային ճանապարհներ**
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) **չկա**

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*)Հատակագծային սահմանափակումներ **համաձայն համայնքի գլխավոր հատակագծի**

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ր Ը

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ **մշակել մենատների և մանսարդային հարկով եռահարկ շենքերի կառուցման կառուցման նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17012020-07-0185 վկայականով տրված հողատարածքի սահմաններում**

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) **համաձայն գլխավոր հատակագծի**

9.2.(*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) **գործող նորմերի համաձայն**

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) **մինչև 15.0 մետր վերին հատակագծային նիշից**

սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագծման դեպքում՝ ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն)

9.4.կառուցապատման խտության գործակիցը (կառույցի, (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) **1.08**

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%) **75%**

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) **25%**

9.7. այլ պահանջներ

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում կոյուղի, տաք ջրի մատակարարում **կոյուղահորը նախատեսել հողամասի սահմաններում**

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2.(*) էլեկտրամատակարարում -

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում -

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը -

(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

12. աղբահանություն — համայնքային

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — կազմակերպել ջրահեռացում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում — տարածքը բարեկարգել և կանաչապատել
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր — տեղական արտադրության շինարարական նյութեր, տանիքի գույնը ներառել կարմիր, դարչնագույն, մուգ կանաչ և շականակագույն երանգները՝ ըստ քաղաքաշինության կանոնադրության
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — ապահովել ՀՀՇՆ 30-01-2014 XXVI գլխի նորմերի պահանջները
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18.Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ — ապահովել ՀՀՇՆ IV-11.01.07-2006 նորմերի պահանջները

19. Շրջակա միջավայրի պահպանում
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — կազմել շին-աշխատանքների կատարման ժամանակացույց
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — երկու տարի
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի N 596-Ն որոշման պահանջներին համապատասխան փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում — համաձայնեցում համայնքի ղեկավարի հետ
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ Մասնագիտական եզրակացությունների ստացում — Համաձայնեցում Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ
(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում — 2227

27. Այլ պայմաններ — նախագիծը հաստատման ներկայացնել երկու օրինակից

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 78 «16» հունիսի 2020թ.

Օբյեկտ **թվով 8 մենատների և մանսարդային հարկով 2 եռահարկ շենքերի կառուցման**
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

8 հատ մենատուն, 2 հատ եռահարկ շենքեր՝ մանսարդային հարկով
հակիրճ բնորոշումը, հզորությունը,

IV կատեգորիա նախագծային փաստաթղթերի մշակման համար:
(ռիսկայնության աստիճանը (կատեգորիան) նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը **Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 38-րդ փողոցի թիվ 1 հասցեի հողամաս, կադ. ծածկ. 07-057-0315-0079**
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող **«Գլոբալ Ռիալ Իսթեյթ» ՍՊԸ, տնօրեն Արա Խաչատուրի Մարկոսյանին, բն. Կոտայքի մ., գ. Ջրվեժ, 46-րդ փ., 88, 90 տ. հեռ. 093 99-00-03**
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,
բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

